ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 54-Լ

«14» 06 2023 թ. ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի դատախազ Լիլիթ Սոսի Գրիգորյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնին նշանակելու և Երևան քաղաքի դատախազի պարտականությունների կատարումը Երևան քաղաքի դատախազի տեղակալ Վաղարշակ Եփրեմի Մկրտչյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի հունիսի 12-ի համապատասխանաբար՝ N 252-Ա և N 254-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Լ.Գրիգորյանի կողմից՝ Երևան քաղաքի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Վ.Մկրտչյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ավագյան Եղիազար - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Խաչատրյան Շիրակ -	Երևան քաղաքի դատախազի տեղակալ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Մանուկյան Լիաննա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ,
Վարդանյան Շողեր -	Երևան քաղաքի դատախազության տարածքային վարչության պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ